Արտատպված է՝ Ի. Ա. Բունին, Վիպակներ և պատմվածքներ, Ե., «Սովետական գրող» հրատարակչություն, 1998. Դորա Եսայանի թարգմանությամբ։

ՆԱՏԱԼԻՆ

Այն ամռանը ես առաջին անգամ ուսանողական գլխարկ դրեցի և երջանիկ էի ջահել ազատ կյանքի առանձնահատուկ երջանկությամբ, որ լինում է միայն այդ ժամանակ։

Մեծացել էի խստականոն ազնվականական ընտանիքում, գյուղում և, պատանի հասակից ջերմորեն երազելով սիրո մասին, դեռևս մաքուր էի հոգով ու մարմնով, շիկնում էի գիմնազիստ ընկերներիս բաց խոսակցությունների ժամանակ, և դա նրանց դուր չէր գալիս. «Դու լավ կանեիր, Մեշչերսկի, վանական դառնայիր»։ Այն ամռանը ես արդեն չէի շիկնի։ Արձակուրդներին տուն գալով, վճռեցի, որ ինձ համար էլ արդեն եկել է ժամանակը բոլորի նման խախտելու մաքրությունս, սեր որոնելու առանց ռոմանտիկայի, և այդպես վճռելով ու նաև ցանկանալով ցուցադրել երկնագույն գլխարկաբոլորքս, սկսեցի սիրային հանդիպումներ որոնելով գնալ հարևան կալվածքները, հարազատներիս ու ծանոթներիս մոտ։ Այդպես հայտնվեցի մորս կողմից ինձ բարեկամ, պաշտոնաթող և վաղուց այրիացած ուլան Չերկասովի, իմ զարմուհի Սոնյայի հոր, որ նրա միակ դուստրն էր, կալվածքում...

Եկա ուշ և տանը ինձ դիմավորեց միայն Սոնյան։ Երբ ցած թռա կառքից և վազ տվի մութ նախասենյակով, նա դուրս եկավ միայն գիշերային ֆլանելե խալաթով, ձախ ձեռքում մոմը բարձր պահած, այտը մեկնեց ինձ համբուրելու և ասաց գլուխն օրորելով, իր սովորական հեգնանքով.

— Ահ, միշտ և ամենուրեք ուշացող երիտասարդ։

— Դեհ, բայց այս անգամ ոչ իր մեղքով,— պատասխանեցի ես։— Ուշացել է ոչ թե երիտասարդը, այլ գնացքը։

— Կամաց, բոլորը քնած են։ Ամբողջ երեկո անհամբերությունից մեռնում էին քեզ սպասելով ու վերջը ձեռ քաշեցին։ Հայրիկը գնաց քնելու բարկացած, քեզ կոչելով թեթևսոլիկ, իսկ Եֆրեմին, որ հավանաբար մնացել էր կայարանում, սպասելով առավոտյան գնացքին՝ ծեր ապուշ։ Նատալին գնաց նեղացած, ծառաները նույնպես ցրվեցին, միայն ես մնացի համբերատար ու քեզ հավատարիմ... Հանվիր, գնանք ընթրելու։

Ես պատասխանեցի, հիանալով նրա կապույտ աչքերով ու վեր պարզած, մինչև ուսը բաց թևով.

— Շնորհակալ եմ, սիրելի բարեկամս։ Քո հավատարմությանը հավատալը հիմա ինձ համար հատկապես հաճելի է, դու իսկական գեղեցկուհի ես դարձել, ու ես քո

նկատմամբ ամենալուրջ մտադրություններն ունեմ: Ի՜նչ ձեռք, պարանոց և որքան գայթակղիչ է այս փափուկ խալաթը, որի տակից, հավանաբար, ոչինչ չկա:

Նա ծիծաղեց:

— Գրեթե ոչինչ: Բայց դու էլ պակաս չես լավացել ու շատ առնականացել ես: Աշխույժ հայացք և գոեհիկ սև բեղիկներ... Միայն թե քեզ ի՞նչ է պատահել: Այս երկու տարվա մեջ, որ քեզ չեմ տեսել, դու ամոթխածությունից շարունակ շիկնող տղայից դարձել ես շատ հետաքրքիր անպատկառ: Եվ դա մեզ սիրային շատ ուրախություններ պիտի պարգևեր, ինչպես մեր տատերը կասեին, եթե չլիներ Նատալին, որին դու հենց վաղն առավոտյան կսիրահարվես ցմահ:

— Բայց ո՞վ է այդ Նատալին,— հարցրի ներս մտնելով նրա հետ կախովի վառ լամպով լուսավորված ճաշասենյակ՝ լուսամուտները բաց ամառային տաք ու խաղաղ գիշերվա մթության մեջ:

— Դա Նատաշա Ստանկևիչն է, գիմնազիայի իմ ընկերուհին, որ հյուր է եկել ինձ մոտ: Այ նա իսկապես գեղեցկուհի է, ոչ ինձ նման: Պատկերացրու. սքանչելի գլխիկ, այսպես կոչված «ոսկե» մազեր և սև աչքեր: Ու նույնիսկ ոչ թե աչքեր, այլ սև արեգակներ, եթե պարսկերեն արտահայտվելու լինենք: Թերթերունքներն, իհարկե, խիտ ու երկար, ու նույնպես սև, դեմքը, ուսերը, մարմինը և այլն մի զարմանալի ոսկեգույն:

— Ի՞նչ և այլն,— հարցրի, ավելի ու ավելի հիանալով մեր խոսակցության տոնով:

— Այ, վաղը ես և նա կգնանք լողանալու, խորհուրդ եմ տալիս քեզ թաքնվես թփերի մեջ, ինքդ կտեսնես, թե ինչ: Եվ կազմվածքը՝ իսկական ջահել հավերժահարս...

Ճաշասենյակում սեղանին կային սառը կոտլետներ, մի կտոր պանիր և մի շիշ Ղրիմի կարմիր գինի:

— Ներող եղիր, ուրիշ բան չկա,— ասաց նա, նստելով սև գինի լցնելով իմ և իր համար:— Օղի էլ չկա: Դեհ, տա աստված, գոնե գինով եկ բաժակ զարկենք:

— Իսկ ի՞նչ տա աստված:

— Շուտ այնպիսի մի փեսացու գտնեմ ինձ համար, որ

ինքը մտնի «մեր տուն»: Ախր շուտով քսանմեկ տարեկան եմ դառնում, իսկ ամուսնանալ ու թողնել գնալ չեմ կարող. Հայրիկն ո՞ւմ հետ պիտի մնա:

— Էհ, տա աստված:

Ու մենք բաժակ զարկեցինք, և դանդաղ ըմպելով ամբողջ գավաթը, նա դարձյալ տարօրինակ քմծիծաղով սկսեց նայել ինձ, այն բանին, թե ինչպես եմ պատառաքաղը բանեցնում, ու ասես ինքն իրեն խոսեց.

— Հա, ոչինչ, մի քիչ նման ես վրացու ու բավական գեղեցիկ ես, առաջ շատ նիհար էիր ու երեսդ կանաչավուն: Ընդհանրապես շատ ես փոխվել, դարձել ես հեշտ, հաճելի: Միայն թե աչքերդ վազվզում են:

— Դա նրանից է, որ ինձ շփոթության մեջ ես գցում քո հմայքներով: Չէ որ դու էլ առաջ բոլորովին այսպիսին չէիր...

Ու ես ուրախ նայեցի նրան ոտքից գլուխ: Նա նստել էր սեղանի մյուս կողմում, աթոռին բարձրացած, ոտքը տակը ծալած, լիքը ծունկը ծնկին հենած, մի քիչ կողքով դեպի ինձ, լամպի տակ փայլում էր նրա ձեռքի հարթ արևայրուկը, փայլփլում էին կապտա-մանիշակագույն աչքերն ու կարմրա-շագանակագույնին տալիս խիտ ու փափուկ մազերը, որ հաստ հյուսք էին արված գիշերվա համար. խալաթի բացված օձիքը ցույց էր տալիս կլոր թխացած պարանոցն ու գիրացող կրծքի եզրը, որի վրա նույնպես եռանկյունի արևայրուկ էր. նրա ձախ այտին խալ կար սև գեղեցիկ աղվամազով:

— Էհ, իսկ հայրիկդ ինչպե՞ս է:

Նա շարունակում էր նայել նույն քմծիծաղով, գրպանից հանեց արծաթե ծխախոտատուփը և արծաթե փոքրիկ լուցկու տուփը և ծխեց մի տեսակ նույնիսկ ավելորդ հմտությամբ, ուղղելով տակը ծալած ազդրը:

— Հայրիկը, փառք աստծու, լավ է: Առաջվա պես ձիգ է, պինդ, թխթխկացնում է հենակն ու թափահարում ճերմակ քյաքուլը, մուգ դարչնագույն ինչ-որ բանով թաքուն ներկում է բեղերն ու այտամորուքները և կտրիճավարի աչք գցում Խրիստյային… Միայն թե առաջվանից ավելի շատ ու համառորեն է գլուխը տանում-բերում: Երևում է, երբեք ոչ

մի բանի համաձայն չէ,— ասաց նա և ծիծաղեց:— Ծխախոտ կուզե՞ս:

Ծխեցի, թեև այն ժամանակ դեռ չէի ծխում, նա նորից գինի լցրեց ինձ և իրեն ու նայեց մթությանը պատուհանից դուրս...

— Այո, առայժմ ամեն բան լավ է, փառք աստծու: Եվ հիանալի ամառ է. ի՜նչ գիշեր է, չէ՞: Միայն սոխակներն են արդեն լռել: Ու ես իսկապես շատ ուրախ եմ քո գալուն: Դեռևս ժամը վեցին ուղարկել էի ետևիցդ, վախենում էի հանկարծ գնացքի գալուն չուշանա ցնդած Եֆրեմը: Բոլորից անհամբեր էի քեզ սպասում: Իսկ հետո նույնիսկ գոհ էի, որ բոլորը ցրվեցին, ու դու ուշանում ես, որ մենք, եթե գաս, մենակ կլինենք: Չգիտես ինչու, հենց այդպես էլ կարծում էի, որ շատ փոխված կլինես, քեզ նմանները միշտ այդպես միանգամից են փոխվում: Ու գիտես, այնքան մեծ հաճույք է նստել տանը մենակ ամռան գիշերով, երբ սպասում ես գնացքով եկող մեկին ու վերջապես լսել, որ նա գալիս է, չխկչխկում են բոժոժիկները, մոտենում են առմուտքին…

Ամուր բռնեցի նրա ձեռքը սեղանի վրայով ու պահեցի ձեռքումս, արդեն ձգտելով նրա ողջ մարմնին: Նա ուրախ հանգստությամբ ծխի օղակներ էր բաց թողնում շրթունքների միջից: Ձեռքը թողեցի և իբր կատակով ասացի.

— Այ, դու ասում ես Նատալի... Ոչ մի Նատալի քեզ չի հասնի... Ի դեպ, ո՞վ է նա, որտեղացի՞:

— Մեր վորոնեժցի է, հիանալի ընտանիքից, մի ժամանակ շատ հարուստ, իսկ հիմա արդեն ուղղակի աղքատ: Տանը խոսում են անգլերեն և ֆրանսերեն, բայց ուտելու բան չունեն... Շատ հուզիչ աղջիկ է, բարեկազմ, բայց դեռ փխրուն: Շատ խելացի է, բայց և շատ ծածկամիտ, միանգամից չես հասկանա խելոք է, թե՞ հիմար... Այդ Ստանկևիչները քո սիրելի զարմիկ Ալեքսեյ Մեշչերսկու մոտ հարևաններն են, և Նատալին ասում է, որ նա սկսել է ինչ-որ հաճախակի գալ իրենց մոտ ու զանգատվել իր ամուրի կյանքից: Սակայն նա Նատալիին դուր չի գալիս: Եվ հետո՝ հարուստ է, կմտածեն, թե փողի համար է ամուսնացել, զոհել է իրեն հանուն ծնողների:

— Լավ,— ասացի,— բայց դառնանք մեզ: Նատալի, Նատալի, իսկ ի՞նչ է լինելու իմ ու քո սիրավեպը:

— Նատալին մեր սիրավեպին ամեն դեպքում չի խանգարի,— պատասխանեց նա:— Դու կխենթանաս նրա սիրուց, բայց կհամբուրվես ինձ հետ: Լաց կլինես իմ կրծքին փարված նրա դաժանության համար, իսկ ես քեզ կմխիթարեմ:

— Բայց դու հո գիտես, որ ես վաղուց, շատ վաղուց սիրահարված եմ քեզ:

— Այո, բայց դա սովորական սիրահարություն էր զարմուհուն, այն էլ չափազանց դավող, դու այն ժամանակ միայն ծիծաղելի էիր և տաղտկալի: Բայց տեր ընդ քեզ, ներում եմ քո նախկին հիմարությունը և պատրաստ եմ վաղն իսկ սկսելու մեր սիրավեպը, անկախ Նատալիից: Իսկ առայժմ գնանք քնենք, վաղը շուտ պիտի վեր կենամ տնտեսության գործերով:

Ու նա տեղից ելավ իրար բերելով խալաթի փեշերը, նախասենյակից վերցրեց գրեթե այրված-վերջացած մոմը ու տարավ ինձ իմ սենյակ: Եվ այդ սենյակի շեմքին, ուրախանալով ու զարմանալով, ինչի համար հոգու խորքում զարմանում և ուրախանում էի ընթրիքի ամբողջ ընթացքում,— սիրային իմ հույսերի այդպիսի երջանիկ արդարացմանը, որի բախտն ունեցա Չերկասովների մոտ,— ես երկար ու ագահորեն համբուրում էի նրան ու սեղմում կողասյանը, ու նա թախծալի փակում էր աչքերը, ավելի ու ավելի ցած իջեցնելով կաթկթող մոմը: Կարմրատակած երեսով հեռանալով ինձնից, նա սպառնաց մատով ու ասաց.

— Միայն թե տես՝ վաղը, բոլորի մոտ չհամարձակվես ինձ խժռել «կրքոտ հայացքներով»: Աստված մի արասցե, հանկարծ հայրիկը մի բան նկատի: Նա ինձնից սարսափելի վախենում է, իսկ ես նրանից ավելի եմ վախենում: Այո, չեմ ուզում, որ Նատալին որևէ բան նկատի: Ես, գիտես, շատ ամաչկոտ եմ, խնդրեմ, չդատես նրանով, թե ինչպես եմ ինձ քեզ հետ պահում: Իսկ եթե հրամանս չկատարես, անմիջապես զզվելի կդառնաս ինձ համար…

Հանվեցի ու անկողին ընկա գլխապտույտով, սակայն

քուն մտա անուշ ու վայրկենապես, ուժասպառ երջանկությունից և հոգնությունից, բնավ չկասկածելով, թե որպիսի մեծ դժբախտություն էր ինձ սպասվում առջևում, որ Սոնյայի կատակները կատակ չպիտի լինեին:

Հետագայում հաճախ եմ հիշել, որպես չարագուշակ նախանշան, որ երբ մտա սենյակս ու լուցկին չխկացրի, որպեսզի մոմը վառեմ, փափուկ վրաս թռավ մի խոշոր չղջիկ: Չղջիկը դեմքիս այնքան մոտ թռավ, որ նույնիսկ լուցկու լույսով տեսա նրա գարշելի մուգ նրբախավը և մեծականջ, կճատ քթով գիշատիչ մռութը, նման մահվան, ու հետո նողկալի թպրտոցով, ծռմռվելով սուզվեց բաց պատուհանի մթի մեջ: Բայց այն ժամանակ անմիջապես մոռացա այդ:

2

Առաջին անգամ Նատալիին տեսա հաջորդ օրը առավոտյան, մի պահ միայն. նա նախասենյակից ճաշասենյակ ներս ընկավ, նայեց,— դեռ սանրված չէր, ինչ-որ թեթև խալաթանման բան էր վրան զցած նարնջագույն մի կտորից,— և փայլեցնելով այդ նարնջագույնը, մազերի ոսկեփայլն ու սև աչքերը, չքվեց: Այդ պահին մենակ էի ճաշասենյակում, նոր էի սուրճս խմել,— ուլանն ավելի շուտ էր խմել վերջացրել ու գնացել էր,— ու սեղանի մոտից վեր կենալով, պատահմամբ շրջվեցի…

Այդ առավոտ արթնացել էի բավական վաղ, երբ դեռ ամբողջ տունը սուզված էր լռության մեջ: Տանը այնքան սենյակներ կային, որ հաճախ դրանք շփոթում էի: Արթնացա հեռավոր մի սենյակում, որի պատուհանները նայում էին դեպի այգու ստվերոտ մասը, քունս լավ առնելով, հաճույքով լվացվեցի, ոտքից գլուխ մաքուր հագնվեցի,— հատկապես հաճելի էր կարմիր մետաքսից նոր շեղօձիք բլուզ հագնելը,— գեղեցիկ սանրեցի սև խոնավ մազերս, որ երեկ էի հարդարել Վորոնեժում, դուրս եկա միջանցք, անցա մյուս միջանցք և հայտնվեցի ուլանի առանձնասենյակի դռան առջև, որը միաժամանակ և նրա ննջասենյակն էր: Գիտենալով, որ ամռանը նա վեր է կենում ժամը հինգի մոտերքը,

դուռը բախեցի: Ոչ ոք չպատասխանեց, և ես դուռը բացեցի, ներս նայեցի ու հաճույքով համոզվեցի, որ այդ ընդարձակ սենյակում, որի եռակի իտալական պատուհանները բացվում էին հարյուրամյա արծաթագույն բարդու տակ, ոչինչ չի փոխվել: Ձախ կողմի ամբողջ պատին կաղնեփայտե գրապահարաններն էին, նրանց միջև մի տեղ բարձրանում էր կարմիր փայտից ժամացույցը՝ անշարժ ճոճանակի պղնձե սկավառակով, մյուս պատի մոտ դրված էին ծխամորճեր մարգարտաշար չիբուխներով, իսկ դրանց գլխին կախված էր ծանրաչափը, երրորդ պատի մոտ դրված էր պապենական ժամանակների գրասեղան՝ ընկուզենու փայտից, գույնը զցած կանաչ մահուդով պատած, իսկ մահուդի վրա դարսված էին աքցաններ, մուրճեր, մեխեր, պղնձյա հեռադիտակ, դռան մոտի պատին, հարյուր փթանոց փայտե բազմոցի գլխին ձվաձև շրջանակների մեջ կախված էին մի ամբողջ շարք գույնը զցած դիմանկարներ. պատուհանի տակ դրված էր գրասեղան և խոր բազկաթոռ՝ և

մեկը, և մյուսը նույնպես հսկայական չափերի. դեպի աջ, շատ լայն կաղնեփայտե մահճակալի գլխին մի նկար էր ամբողջ պատով մեկ. սևացած, լաքե ֆոն, վրան հազիվ երևացող մուգ ծխագույն ամպեր և կանաչ-երկնագույն բանաստեղծական ծառեր, իսկ առաջին պլանում քարացած ձվի սպիտակուցի նման փայլում է մերկ մարմնեղ մի գեղեցկուհի, գրեթե բնական չափերի, որ կիսաթեքված է դեպի դիտողը հպարտ դեմքով և հաստ մեջքի բոլոր գոգավորություններով, ձիգ հետույքի և զորեղ ոտքերի ետևի մասով, երկարուկ ու չռված մատներով գայթակղիչ կերպով ծածկելով՝ մի ձեռքով կրծքապտուկը, մյուսով գեր ծալքավոր փորատակը: Այդ բոլորը նայելով, հետևիցս լսեցի ուլանի հնչեղ ձայնը, որ նախասենյակից ինձ մոտ էր գալիս հենակով.

— Ոչ, եղբայրս, այս ժամին ինձ ննջասենյակում չես գտնի: Դուք եք, որ թավալ եք տալիս մահճակալում մինչև երեք կաղնու բոյ:

Համբուրեցի նրա լայն չոր ձեռքն ու հարցրի.

— Ի՞նչ երեք կաղնի, քեռի:

— Գյուղացիներն են այդպես ասում,— պատասխանեց նա ճերմակած քյաքուլը թափահարելով ու նայելով ինձ

դեղին, դեռ սրատես ու խելացի աչքերով:— Արեգակը արդեն երեք կաղնու չափ բարձրացել է, իսկ դու դեռ մռութդ բարձից չես կտրել, ասում են գյուղացիք: Դեհ, գնանք սուրճ խմենք...

«Հիանալի ծերուկ է, հիանալի տուն է»,— մտածում էի, նրա հետ մտնելով ճաշասենյակ, որի բաց պատուհաններից ներս էր նայում վաղորդյան այգու կանաչն ու գյուղական կալվածատան ողջ ամառային բարօրությունը: Սպասարկում էր ծեր դայակը՝ փոքրիկ ու կորամեջք, ուլանը արծաթե բաժակալի մեջ դրված հաստ բաժակով խմում էր մուգ թեյ սերուցքով, բաժակի մեջ հաստ մատով պահելով ոսկե կլոր հինավուրց գդալի երկար ու բարալիկ, պտուտակված պոչը, ես կտոր-կտորի ետևից ուտում էի կարագով սև հացն ու շարունակ սուրճ էի ավելացնում տաք արծաթե սրճամանից. ուլանը, որ միայն իրենով էր հետաքրքրվում, ինձնից ոչինչ չհարցնելով, պատմում էր հարևան կալվածատերերի մասին, ոնց ասես հայհոյում ու ծաղրում էր նրանց, ես ձևացնում էի, թե լսում եմ, նայում էի նրա բեղերին, այտամորուքներին, քթի ծայրի երկար մազերին, իսկ ինքս այնպես էի սպասում Նատալիին և Սոնյային, որ տեղումս նստել չէի կարողանում. դա ի՞նչ Նատալի է, և ինչպե՞ս պիտի հանդիպենք ես և Սոնյան երեկվանից հետո, նրա նկատմամբ հիացմունք, երախտագիտություն էի զգում, փչացած մտքեր էին լցվում գլուխս կապված նրա և Նատալիի ննջասենյակների, այն ամենի հետ, ինչ լինում է կանացի ննջասենյակի առավոտյան խառնակության մեջ... Միգուցե Սոնյան, այնուամենայնիվ, որևէ բա՞ն է ասել Նատալիին մեր երեկ սկսված սիրո մասին: Եթե այդպես է, ուրեմն ես սիրո նման մի բան եմ զգում նաև Նատալիի հանդեպ, ոչ թե նրա համար, որ նա իբր գեղեցկուհի է, այլ որովհետև նա դարձել է իմ և Սոնյայի թաքուն գործակիցը, և ինչո՞ւ չի կարելի սիրել միանգամից երկուսին: Ահա նրանք հիմա ներս կմտնեն իրենց ողջ առավոտյան թարմությամբ, կտեսնեն ինձ, իմ վրացական գեղեցկությունը և կարմիր շեղօձիք բլուզը,

կծիծաղեն, կնստեն սեղանի մոտ գեղեցիկ լցնելով սուրճը այս տաք սրճամանից. առավոտյան ջահել ախորժակ,

ջահել հուզմունք, քունն առած աչքերի փայլ, դիմափոշու մի թեթև շերտ քնից հետո կարծես ավելի ջահելացած այտերին և այդ ծիծաղը ամեն խոսքից հետո ոչ շատ բնական և առավել հմայիչ... Իսկ նախաճաշից առաջ նրանք այգով կգնան դեպի գետ, կհանվեն լողարանում, մերկ մարմինները լուսավորված վերից երկնքի կապույտով, իսկ ցածից վճիտ ջրի փայլով... Միշտ էլ վառ երևակայություն եմ ունեցել, ու մտովի տեսնում էի, ինչպես Սոնյան և Նատալին կկանգնեն լոգարանի փոքրիկ սանդուղքի բազրիքից բռնած, ինչպես անվստահ կսկսեն իջնել ջրի մեջ սուզված նրա աստիճաններով՝ թաց, սառն, սայթաքուն լորձունքի կանաչ խավից, որ գոյացել էր նրա վրա, ինչպես Սոնյան խիտ մազերով գլուխը ետ գցած հանկարծ միանգամից իրեն ջուրը կգցի կուրծքը դեպի վեր, և տարօրինակ երևալով ջրի միջից երկնագունա-կավճագույն մարմնով, ծուռ-ծուռ տարբեր կողմեր կտարածի ձեռները և ոտքերը անկյունավոր ծալած, գորտի նման...

— Դեհ, մինչև ճաշ, դու հո հիշում ես. ճաշը ժամը տասներկուսին է,— բացասաբար գլուխն օրորելով, ասաց ուլանը և վեր կացավ՝ իր սափրած կզակով, մուգ դարչնագույն բեղերով, որ միացած էին նույնպիսի այտամորուքներին, ծերունավարի պինդ, չեսուչայե լայն կոստյումով և տափակաքիթ կոշիկներով, հենակը լայն, սպիավոր ձեռքին, թփթփացրեց ուսիս ու հեռացավ արագաքայլ: Եվ ահա հենց այդ ժամանակ, երբ ես էլ վեր կացա, որ կողքի սենյակով դուրս գամ պատշգամբ, նա ներս ընկավ, մի պահ երևաց ու անհետացավ, տեղնուտեղը ցնցելով ինձ ուրախ հիացմունքով: Դուրս եկա պատշգամբ զարմացած. իսկապես որ գեղեցկուհի է, ու երկար կանգնած էի այդպես, ասես մտքերս ժողովելով: Ես նրանց այնպե՛ս էի սպասում ճաշասենյակում, բայց երբ վերջապես պատշգամբում լսեցի ճաշասենյակից եկող նրանց ձայները, հանկարծ փախա այգի. հանկարծ ինչ-որ մի վախ զգացի, չգիտեմ երկուսից էլ, որոնցից մեկի հետ արդեն հրապուրիչ գաղտնիք ունեի, թե ավելի շատ Նատալիից, այն կարճ պահից, որով նա կես ժամ առաջ շլացրեց ինձ միանգամից: Քայլեցի այգում, որ ինչպես և ամբողջ կալվածքը, ընկած էր գետի ցածրադիր մասում, վերջապես ինքս ինձ

տիրապետեցի, ներս գնացի շինծու անկաշկանդ ու հանդիպեցի Սոնյայի ուրախ համարձակությանը և Նատալիի հաճելի կատակին, որը սև թերթերունքների միջից ժպտալով ինձ ուղղեց իր աչքերի սևությունը, որ հատկապես ապշեցուցիչ էին նրա մազերի գույնի հետ:

— Մենք արդեն հանդիպել ենք:

Հետո կանգնած էինք պատշգամբում քարե ճաղաշարին հենված, ամառային հաճույքով զգալով, ինչպես արևը տաքացնում է մեր բաց գլուխները, և Նատալին կանգնած էր իմ կողքին, իսկ Սոնյան նրան փաթաթված ու իբր ցրված ինչ-որ տեղ նայելով, երգում էր քմծիծաղով. «Средь шумново бала, случайно...»: Հետո շտկվեց.

— Գնացինք լողանալու: Առաջ մենք կգնանք, հետո դու... Նատալին վազ տվեց սավաններ բերելու, իսկ նա մի պահ ոտքը կախ գցեց ու շշնջաց ինձ.

— Բարի եղիր այսօրվանից ձևացնելու, որ սիրահարվել ես Նատալիին: Եվ զգուշացիր, եթե հանկարծ պարզվի, որ ձևացնելու կարիք չունես:

Քիչ էր մնում պատասխանեի ուրախ հանդգնությամբ, որ, այո, արդեն կարիք չունեմ, իսկ նա աչքը դռանը, կամացուկ ավելացրեց.

— Քեզ մոտ կգամ ճաշից հետո…

Երբ նրանք վերադարձան, լողարան գնացի ես: Նախ կեչու երկար ծառուղով, հետո առափնյա զանազան հինավուրց ծառերի միջով, ուր զգացվում էր գետաջրի տաք բույրը և ծառերի կատարներին կռկռում էին սերմնագռավները, քայլում էի ու նորից մտածում երկու միանգամայն հակասական զգացմունքներով Նատալիի ու Սոնյայի մասին, այն մասին, որ ես լողանալու եմ նույն ջրում, ուր հենց նոր լողանում էին նրանք...

Ճաշից հետո, համակ այդ երջանիկ, աննպատակ, ազատության ու խաղաղության մեջ, որ բաց պատուհանից երևում էր այգուց,— երկինք, կանաչ, արև,— երկար ձգված ճաշից հետո՝ մածնաբրդոշով, տապակած ճտերով և սերուցքով ազնվամորիով, որի ընթացքում սիրտս թաքուն մարում էր Նատալիի ներկայությունից և սպասումից այն ժամի, երբ

ամբողջ տունը կընկղմվի հետճաշյա հանգստի մեջ և Սոնյան (ճաշի էր եկել մուգ-կարմիր թավշանման մի վարդ մազերի մեջ) թաքուն վազ կտա ինձ մոտ, որպեսզի շարունակենք երեկվանը արդեն ոչ հապշտապ, մի կերպ, անմիջապես գնացի իմ սենյակ, ծածկեցի փակոցափեղկերը և սկսեցի սպասել նրան թուրքական բազմոցին պառկած, ականջ դնելով կալվածատան շոգ լռությանը և թռչունների արդեն հոգնած հետկեսօրյա ծլվլոցին այգում, որտեղից փակոցափեղկերի միջով ներս էր թափանցում ծաղիկներից և խոտերից քաղցրացած օդը, պառկել ու մտածում էի անելանելի վիճակում. ինչպե՞ս պիտի ապրեմ հիմա այս երկվության մեջ՝ Սոնյայի հետ թաքուն հանդիպումներով և Նատալիի կողքին, որի մասին միտքն անգամ ինձ համակում էր այնպիսի մաքուր սիրո բերկրանքով, տենչալի երազանքով նայելու նրան միայն երկրպագությամբ, ինչպես նայում էի քիչ առաջ նրա բարակ, կռացած մեջքին, նրա աղջկական սուր-սուր արմունկներին, որոնցով նա կիսականգնած հենվել էր արևից տաքացած քարե ճաղաշարին: Սոնյան նրա կողքին հենված և նրա ուսերը գրկած, իր բատիստե բոլորածալավոր առավոտվա տնազգեստով նման էր նոր ամուսնացած ջահել կնոջ, իսկ նա իր քաթանե շրջազգեստով և մալոռուսական ասեղնագործով բլուզը հագին, որի տակ կարելի էր պատկերացնել նրա դեռատի կազմվածքի ողջ կատարելությունը, կարծես մի աղջնակ լիներ: Եվ հենց դա էր գերագույն հաճույքը, որ ես մտքովս իսկ չէի կարող անցկացնել, թե կարող եմ նրան համբուրել նույն զգացմունքներով, ինչ համբուրում էի երեկ Սոնյային: Բլուզի թեթև ու լայն թևքի միջից, որ ուսերի մոտ ասեղնագործված էր կարմիրով ու կապույտով, երևում էր նրա բարակ թևը, չոր-ոսկեգույն մաշկին շեկ մազերով, և ես նայում էի ու մտածում. ինչ պիտի զգայի, եթե համարձակվեի շրթունքներս հպել նրա թևին: Եվ իմ հայացքն զգալով, նա ինձ դարձրեց աչքերի փայլուն սևությունն ու ողջ իր շողշողուն գլխիկը բավական մեծ հյուսքով շրջանակված: Ես մի կողմ քաշվեցի ու շտապով աչքերս ցած գցեցի, արևի տակ թափանցող փեշի տակից տեսնելով նրա նուրբ, պիրկ, ազնվատոհմիկ կոճիկները մոխրագույն թափանցիկ գուլպայի մեջ...

Սոնյան, վարդը մազերի մեջ, արագ բացեց ու իր ետևից փակեց դուռը, կամացուկ բացականչեց. «Ինչպես, դու քնած էիր»: Տեղիցս վեր թռա. ի՞նչ ես ասում, ի՞նչ ես ասում, ինչպե՞ս կարող էի քնել, բռնեցի նրա ձեռները: «Դուռը բանալիով փակիր...», նետվեցի դեպի դուռը, նա նստեց բազմոցին, աչքերը փակելով. «դեհ, արի ինձ մոտ», և մենք միանգամից կորցրինք ամոթ ու ողջամտություն: Այդ րոպեների ընթացքում գրեթե ոչ մի խոսք չփոխանակեցինք, և նա իր տաք մարմնի ողջ հրապույրով թույլ էր տալիս ինձ համբուրելու իրեն ամբողջապես, միայն համբուրելու, և ավելի ու ավելի թախծալի էր փակում աչքերը, ավելի շիկնում էր դեմքը: Ու նորից հեռանալով ու մազերը կարգի բերելով, շշուկով սպառնաց.

— Իսկ ինչ վերաբերում է Նատալիին, կրկնում եմ. զգուշացիր կեղծիքից իսկականի անցնելուց: Իմ բնավորությունը բնավ էլ այնպես հեզ չէ, ինչպես կարող է թվալ:

Վարդն ընկած էր հատակին: Վերցրի ու պահեցի սեղանիս վրա, երեկոյան դեմ նրա մուգ կարմիր թավիշն արդեն թոշնել էր ու դարձել մանիշակագույն:

3

Կյանքս շարունակում էր ընթանալ արտաքուստ սովորական հունով, սակայն ներքուստ և ոչ մի րոպե հանգիստ չունեի, շարունակ ավելի ու ավելի էի կապվում Սոնյային, գիշերները նրա հետ իմ ուժասպառող կրքոտ հանդիպումների քաղցր սովորույթին,— հիմա նա մոտս էր գալիս միայն ուշ երեկոյան, երբ ամբողջ տունն արդեն քնած էր, և գնալով ավելի տառապալից ու հրճվագին թաքուն հետևում էի Նատալիին, նրա յուրաքանչյուր շարժումին: Ամեն բան ընթանում էր ամառային սովորական կարգով հանդիպումներ առավոտյան, լող ճաշից առաջ և ճաշ, հետո՝ հանգիստ ամեն մեկն իր սենյակում, հետո այգի, նրանք որևէ բան էին ասեղնագործում կեչու ծառուղում նստած և ստիպում էին ինձ բարձրաձայն կարդալ Գոնչարով կամ մուրաբա էին եփում տան կողքին, պատշգամբից դեպի աջ կաղնիների տակի

ստվերոտ բացատում. ժամը հինգին թեյ էինք խմում մյուս, ձախ կողմի ստվերոտ բացատում, երեկոյան զբոսնում կամ կրոկետ էինք խաղում տան առջևի ընդարձակ բակում,— ես և Նատալին Սոնյայի դեմ կամ Սոնյան և Նատալին իմ դեմ,— մթնշաղին ընթրում էինք ճաշասենյակում… Ընթրիքից հետո ուլանը գնում էր քնելու, իսկ մենք դեռ երկար նստում էինք պատշգամբի մթության մեջ, ես և Սոնյան կատակելով ու ծխելով, իսկ Նատալին լուռ: Վերջապես Սոնյան ասում էր. «Դեհ, քնենք», և նրանց հրաժեշտ տալով, գնում էի իմ սենյակ, սառչող ձեռքերով սպասում նվիրական այն ժամին, երբ ամբողջ տունը կմթնի և կխաղաղվի այնպես, որ լսելի դառնա գլխավերևս, այրվող մոմի տակ կախված գրպանի ժամացույցի բարալիկ տկտկոցը, ու շարունակ զարմանում էի, սարսափում. ինչի՞ համար է աստված ինձ այսպես պատժել, ինչո՞ւ է միանգամից երկու սեր տվել, այդքան տարբեր ու այդքան ուժգին, այդպիսի տառապալից երկրպագություն Նատալիի գեղեցկությանը և մարմնական արբեցում Սոնյայով: Զգում էի, որ ահա ուր որ է այլևս չենք դիմանա մեր ոչ լիակատար մոտիկությանը և որ այն ժամանակ ես բոլորովին

կխելագարվեմ մեր գիշերային հանդիպումների սպասումից, և հետո ամբողջ օրը դրանց զգացողությունից, և այդ ամենը Նատալիի կողքին: Սոնյան արդեն խանդում էր, երբեմն կատաղի բռնկումներ էր ունենում, բայց, միաժամանակ, երբ մենակ էինք լինում՝ ասում էր ինձ.

— Վախենում եմ, որ ես ու դու սեղանի շուրջ Նատալիի ներկայությամբ մեզ այնքան էլ անկաշկանդ չենք պահում: Հայրիկը, ինձ թվում է, սկսում է ինչ-որ բան նկատել, Նատալին նույնպես, իսկ դայակը, սա, իհարկե, արդեն վստահ է, որ մեր մեջ մի բան կա և երևի թաքուն ասում է հայրիկին: Նատալիի հետ մենակ ավելի երկար նստիր այգում, կարդա նրա համար այդ անտանելի «Զառիթափը», երբեմն երեկոները տար նրան զբոսնելու… Դա սարսափելի է, ես հո տեսնում եմ, ինչպես ապուշի նման աչքդ չես կարողանում նրանից կտրել, երբեմն ատելություն եմ զգում քո հանդեպ, պատրաստ եմ հասարակ աղջկա նման բոլորի

ներկայությամբ հարձակվելու ու մազերդ պոկոտելու, բայց ի՞նչ կարող եմ անել:

Ամենասարսափելին այն էր, որ ինչպես թվում էր ինձ, Նատալին էր սկսել չգիտես տառապել թե վրդովվել, զգալ, որ իմ և Սոնյայի մեջ թաքուն մի բան կա: Նա որ առանց այդ էլ լռակյաց էր, դարձել էր ավելի լռակյաց, կրոկետ էր խաղում կամ ասեղնագործությամբ զբաղվում չափազանցված ուշադրությամբ: Մենք կարծես վարժվել էինք միմյանց, մտերմացել, բայց ահա մի անգամ հյուրասենյակում նրա հետ մենակ ժամանակ, նա բազմոցին կիսապառկած նոտաներ էր թերթում, ես կատակեցի.

— Լսել եմ, Նատալի, որ ես և դուք միգուցե բարեկամանանք:

Նա խիստ նայեց ինձ.

— Ինչպե՞ս:

— Իմ զարմիկ Ալեքսեյ Նիկոլաևիչ Մեշչերսկին...

Նա թույլ չտվեց խոսքս ավարտեմ.

— Ահա՛ թե ինչ: Ձեր զարմիկը, այդ, ներեցեք, հաստ, ամբողջապես սև փայլուն մազածածկ, թլվատ հսկան՝ կարմիր ուռած բերանով... Եվ ո՞վ է ձեզ իրավունք տվել ինձ հետ այս բաների մասին խոսելու:

Վախեցա.

— Նատալի, Նատալի, ինչո՞ւ եք ինձ հետ այդքան խիստ: Նույնիսկ կատակել թույլ չեք տալիս: Ներեցեք, խնդրում եմ,— ասացի նրա ձեռքը բռնելով:

Նա ձեռքը չքաշեց և ասաց.

— Ես մինչև օրս չեմ հասկանում... չգիտեմ ձեզ... Բայց բավական է այդ մասին...

Որպեսզի չտեսնեմ նրա տանջալից հրապուրիչ թենիսի սպիտակ փոքրիկ կոշիկները, որ երևում էին բազմոցի վրա թեք տակը քաշած ոտքերին, վեր կացա և դուրս եկա պատշգամբ: Այգու ետնից ամպ էր բարձրանում, օդը մթնում էր, ավելի ու ավելի լայնորեն ու մոտ էր լսվում այգում ամառային մեղմ աղմուկը, քաղցր փչում էր դաշտային անձրևի քամին, և հանկարծ ինձ համակեց այնքան քաղցր, ջահել ու ազատ, մի անպատճառ ու ամեն ինչի համաձայն երջանկություն, որ բղավեցի.

— Նատալի, մի րոպե դուրս եկեք:

Նա մոտեցավ շեմքին.

— Ի՞նչ:

— Շնչեք, ի՜նչ քամի է: Ի՜նչ ուրախություն կարող էր դառնալ ամեն ինչ:

Նա լռեց:

— Այո:

— Նատալի, որքան ոչ սիրալիր եք դուք ինձ հետ: Դուք որևէ բա՞ն ունեք իմ դեմ:

Նա հպարտ թոթվեց ուսերը.

— Ինչո՞ւ և ի՞նչ կարող եմ ես ունենալ ձեր դեմ:

Երեկոյան, մթին պատշգամբի հյուսկեն բազկաթոռների մեջ պառկած, երեքս էլ լուռ էինք,— աստղերը տեղ-տեղ միայն առկայծում էին ամպերի միջից, գետի կողմից թույլ քամի էր փչում, այնտեղ ծուլորեն կռկռում էին գորտերը:

— Անձրև պիտի գա, քնել եմ ուզում,— ասաց Սոնյան, հորանջը պահելով:— Դայակն ասաց, որ ջահել լուսինը նորել է, ու հիմա մի շաբաթվա չափ պիտի «թրջվի»:— Եվ, լռելով, ավելացրեց.— Նատալի, դուք ի՞նչ եք մտածում առաջին սիրո մասին:

Նատալին պատասխանեց մթության միջից.

— Մի բանում եմ միայն վստահ. մեծ տարբերություն կա պատանու և աղջկա առաջին սիրո մեջ:

Սոնյան մտածեց.

— Դեհ, աղջիկներն էլ տարբեր են լինում...

Եվ վճռաբար վեր կացավ.

— Ոչ, գնացինք քնելու, քնենք:

— Իսկ ես դեռ մի քիչ կննջեմ այստեղ, գիշերն ինձ դուր է գալիս,— ասաց Նատալին:

Շշնջացի, լսելով Սոնյայի հեռացող քայլերը.

— Մի քիչ վատ խոսեցինք ես և դուք այսօր:

Նա պատասխանեց:

— Այո, այո, մենք վատ խոսեցինք...

Հաջորդ օրը հանդիպեցինք կարծես հանգիստ: Գիշերը մեղմ անձրև էր գալիս, բայց առավոտյան եղանակը բացվեց, ճաշից հետո արդեն չոր էր և շոգ: Թեյից առաջ, ժամը հինգի մոտերքը, երբ Սոնյան ինչ-որ տնտեսական հաշիվներ

էր անում ուլանի առանձնասենյակում, մենք նստած էինք կեչու ծառուղում և փորձում էինք շարունակել «Զառիթափի» բարձրաձայն ընթերցումը: Նա կռացած ինչ-որ բան էր կարում աջ ձեռքը շարժելով, ես կարդում էի ու ժամանակ առ ժամանակ քաղցր կարոտով նայում նրա ձախ ձեռքին, որ երևում էր թևքի միջից, դաստակի վրայի շեկ մազիկներին, ու նույնպիսի մազիկներին այն մասում, ուր հետևից պարանոցը վերջանում ու սկսվում էր թիկունքը, ու կարդում էի ավելի ու ավելի մեծ աշխույժով, կարդացածիցս ոչ մի բառ չհասկանալով: Վերջապես ասացի.

— Էհ, հիմա էլ դուք կարդացեք...

Նա մեջքը շտկեց, բարակ բլուզի տակ նշմարվեցին կրծքերի կետերը, կարը մի կողմ դրեց և նորից կռանալով, ցած կախելով իր տարօրինակ ու սքանչելի գլուխը և ցույց տալով ինձ ծոծրակն ու թիկունքի եզրը, գիրքը դրեց ծնկներին, սկսեց կարդալ արագ և անհաստատ ձայնով. նայում էի նրա ձեռքերին, նրա ծնկներին գրքի տակ, տառապելով անզուսպ սիրուց դրանց հանդեպ, նրա ձայնի հանդեպ: Նախահիրիկնային այգու այս ու այն տեղերում թռչելով ծղրտում էին պիրոլները, մեր դիմաց կեչիների ծառուղու մեջ միայնակ աճած սոճու բնին սեղմված բարձր կախվել էր մի կարմրագորշ փայտփորիկ...

— Նատալի, ինչ զարմանալի գույն ունեն ձեր մազերը: Իսկ հյուսքը մի քիչ ավելի մուգ է, հասած եգիպտացորենի գույնի...

Նա շարունակում էր կարդալ:

— Նատալի, նայեք, փայտփորիկ:

Նա վերև նայեց.

— Այո, այո, արդեն տեսել եմ, և այսօր, և երեկ եմ տեսել... Մի խանգարեք կարդալ:

Լռեցի, հետո նորից.

— Նայեք, ինչ նման է սա չորացած գորշ որդերի:

— Ի՞նչը, որտե՞ղ:

Ցույց տվեցի նրան նստարանը մեր միջև, վրայի թռչնի կավճանման ծերտը:

— Այնպես չէ՞:

Եվ բռնեցի ու սեղմեցի նրա ձեռքերը, շշնջալով ու ծիծաղելով ուրախությունից.

— Նատալի, Նատալի:

Նա լուռ ու երկար նայեց ինձ, հետո ասաց.

— Բայց չէ՞ որ դուք սիրում եք Սոնյային:

Կարմրեցի հանցանքի մեջ բռնված խաբեբայի նման, բայց այնպիսի եռանդով անմիջապես հրաժարվեցի Սոնյայից, որ նա նույնիսկ զարմանքից թեթևակի բացեց շրթունքները.

— Դա ճիշտ չէ՞:

— Ճիշտ չէ, ճիշտ չէ: Ես նրան շատ եմ սիրում, բայց քրոջս նման, չէ որ մենք մանկուց իրար գիտենք:

4

Հաջորդ օրը նա դուրս չեկավ ոչ առավոտյան, ոչ ճաշին:

— Սոնյա, Նատալիին ի՞նչ է պատահել,— հարցրեց ուլանը, և Սոնյան պատասխանեց չար ծիծաղելով.

— Պառկած է առավոտից գլիշերանոցով, դժբախտ, դեմքից երևում է, որ լաց է եղել, սուրճ բերեցին՝ կիսատ թողեց... Ի՞նչ է պատահել. «Գլուխս ցավում է»: Չլինի՞ սիրահարվել է:

— Պարզ բան է,— ասաց ուլանը կայտառ, և հավանություն տվող հայացքով նայելով ինձ, հետն էլ գլուխը բացասաբար շարժելով:

Նատալին դուրս եկավ միայն երեկոյան թեյին, բայց պատշգամբ մտավ թեթև ու կայտառ, ժպտաց ինձ սիրալիր ու կարծես մի քիչ մեղավոր, զարմացնելով իր այդ կայտառությամբ, ժպիտով և որոշ նոր զուգվածությամբ. մազերը պինդ հավաքված էին, առջևից մի քիչ գանգրացրած, ունելիով ալիքաձև տված, հագին ուրիշ զգեստ էր, կանաչ ինչ-որ կտորից, շատ պարզ ու շատ գեղեցիկ, հատկապես մեջքատեղի կիպությամբ, սև կիսակոշիկներ՝ բարձրակրունկ, հոգուս խորքում նույնիսկ ախ քաշեցի նոր հիացմունքից: Պատշգամբում նստած թերթում էի «Իստորիչեսկի վեստնիկը», որի մի քանի գրքերը տվել էր ինձ ուլանը, երբ հանկարծ նա ներս մտավ այդպես աշխույժ ու մի քիչ շփոթված սիրալիր.

— Բարի երեկո: Գնանք թեյ խմելու: Այսօր ինքնաեռի մոտ ես եմ: Սոնյան անառողջ է:

— Ինչպե՞ս: Մեկ դուք, մեկ նա՞:

— Իմ գլուխն էր ցավում առավոտից: Ամոթ է ասել, նոր միայն ինձ կարգի բերեցի...

— Ինչ հրաշք է այս կանաչը ձեր աչքերի և մազերի հետ,— ասացի: Եվ հանկարծ հարցրի կարմրելով.— Դուք երեկ ինձ հավատացի՞ք:

Նա նույնպես շիկնեց՝ նուրբ և կաս-կարմիր, ու երեսը շրջեց.

— Ոչ միանգամից, ոչ լիովին: Հետո հանկարծ մտածեցի, որ հիմք չունեմ ձեզ չհավատալու... և հետո, ըստ էության, իմ ինչ գործն են ձեր և Սոնյայի զգացմունքները: Բայց գնանք...

Ընթրիքին դուրս եկավ և Սոնյան ու մի պահ որսալով ասաց ինձ.

— Ես հիվանդացել եմ: Դա ինձ մոտ շատ ծանր է ընթանում, մի հինգ օր պառկում եմ: Այսօր դեռ կարող էի դուրս գալ, իսկ վաղն արդեն չեմ կարող: Քեզ խելոք կպահես առանց ինձ: Ես քեզ սարսափելի սիրում եմ և սարսափելի խանդում:

— Մի՞թե այսօր գոնե մի րոպեով էլ չես գա մոտս:

— Հիմար ես:

Դա և երջանկություն էր, և դժբախտություն. հինգ օր լրիվ ազատություն Նատալիի հետ և հինգ օր գիշերները մոտս չեմ տեսնելու Սոնյային:

Մի շաբաթվա չափ տունը կառավարում էր, կարգադրություններ անում, սպիտակ գոգնոցը կապած բակով խոհանոց էր գնում Նատալին, դեռ երբեք չէի տեսել նրան այդպես գործնական, երևում էր, որ Սոնյային փոխարինողի և հոգատար տանտիրուհու դերը նրան մեծ բավականություն էր պատճառում, և որ նա կարծես հանգստանում էր թաքուն ուշադրությունից այն բանին, թե ես և Սոնյան ինչ ենք խոսում, ինչ հայացքներ ենք փոխանակում: Բոլոր այս օրերին ճաշի ժամանակ նախ տագնապ էր լինում, թե լա՞վ է լինելու ամեն բան, իսկ հետո գոհունակություն, որ ամեն բան լավ էր, և ծեր խոհարարը և Խրիստյան՝ ծիծաղկոտ սպասուհին,

բերում և մատուցում էին ժամանակին, ուլանին չջղայնացնելով, Նատալին ճաշից հետո գնում էր Սոնյայի մոտ, ուր ինձ չէին թողնում, և մնում էր մինչև երեկոյան թեյը, իսկ ընթրիքից հետո՝ ամբողջ երեկո: Ինձ հետ մենակ մնալուց նա, երևում է, խուսափում էր, և ես տարակուսանքի մեջ էի, տխրում ու տառապում էի միայնության մեջ: Ինչո՞ւ է դարձել սիրալիր և խուսափում է: Վախենում է Սոնյայից, թե՞ իրենից, իմ հանդեպ իր զգացմունքից: Ու շատ էի ուզում հավատալ, որ վախենում է իրենից, արբենում էի այդ գնալով հավանական դարձող երազանքով: Հո հավիտյանս կապված չե՞մ լինելու Սոնյայի հետ, հո հուր-հավիտյան այստեղ հյուր չե՞մ լինելու, ու Նատալին նույնպես, մեկ-երկու շաբաթից, միևնույն է, պիտի մեկնեմ, ու վերջ կլինի նաև իմ տառապանքներին... առիթ կգտնեմ գնալու ու ծանոթանալու Ստանկևիչների հետ, հենց որ Նատալին տուն վերադառնա... Հեռանալ Սոնյայից, այն էլ խաբելով, թաքուն երազելով Նատալիին, նրա սերն ու ձեռքը նվաճելու հույսով, իհարկե, շատ ցավալի կլինի,— մի՞թե միայն կրքով եմ ես Սոնյային համբուրում, մի՞թե չեմ սիրում և նրան,— բայց ինչ արած, վաղ թե ուշ, միևնույն է, դրանից չես խուսափի... Եվ անդադար այսպես մտածելով, անդադար հոգեկան

հուզմունքի, սպասումի մեջ ինչ-որ բանի, ջանում էի Նատալիին հանդիպելիս ինձ պահել որքան կարելի է զուսպ, սիրալիր. դիմանալ, դիմանալ է պետք մինչև որոշ ժամանակ: Տառապում էի, տխրում,— կարծես դիտմամբ երեք օր անձրևում էր, համաչափ թափվում, հազարավոր թաթիկներով թխկթխկացնում տանիքին, տանը կիսամութ էր, ճաշասենյակի առաստաղին և լամպին ճանճեր էին քուն մտել,— բայց դիմանում էի, երբեմն ժամերով նստում էի ուլանի առանձնասենյակում, լսում նրա զանազան պատմությունները...

Սոնյան սկսեց դուրս գալ նախ խալաթը վրան գցած, մի ժամով, երկու ժամով, քնքշանվաղ ժպիտով իր թուլությանը, պառկում էր պատշգամբում քաթանե թիկնաթոռին, և ի սարսափ իմ, խոսում հետս քմահաճորեն ու չափազանց քնքուշ, չքաշվելով Նատալիի ներկայությունից:

— Վիտիկ, մի քիչ նստիր կողքիս, ցավեր ունեմ, տխուր եմ, ծիծաղելի մի բան պատմիր... Լուսինն իսկապես էլ նորում էր, և կարծես նորեց արդեն... եղանակը բացվեց, և ի՞նչ լավ բուրում են ծաղիկները...

Հոգուս խորքում զայրանալով, պատասխանում էի.

— Եթե ծաղիկները ուժեղ բուրում են, ուրեմն նորից է անձրևելու:

Նա խփում էր ձեռքիս.

— Չհամարձակվես առարկել հիվանդին:

Վերջապես սկսեց դուրս գալ և ճաշի, և երեկոյան թեյի, միայն դեռ գունատ ու հրամայելով իրեն մատուցել բազկաթոռի մոտ: Սակայն ընթրիքի և ընթրիքից հետո պատշգամբ դեռ դուրս չէր գալիս: Եվ մի անգամ երեկոյան թեյից հետո, երբ նա գնաց իր սենյակ ու Խրիստյան ինքնաեռը սեղանից տարավ խոհանոց, Նատալին ասաց ինձ.

— Սոնյան զայրանում է, որ ես շարունակ նստում եմ իր կողքին, որ դուք միշտ մենակ եք: Նա դեռ չի առողջացել, իսկ դուք առանց նրա տխրում եք:

— Ես տխրում եմ միայն առանց ձեզ,— պատասխանեցի:— Երբ դուք չեք լինում...

Նա այլայլվեց, բայց իրեն հավաքեց և դժվարությամբ ժպտաց.

— Բայց չէ որ մենք պայմանավորվել ենք այլևս չգժտվել... Ավելի լավ է լսեք, թե ինչ եմ ասում. դուք տանը փակված շատ մնացիք, գնացեք և զբոսնեք մինչև ընթրիք, իսկ հետո ես ձեզ հետ կնստեմ այգում, լուսնի մասին կանխագուշակությունը, փառք աստծո, չկատարվեց, հիանալի գիշեր է լինելու...

— Սոնյան ինձ խղճում է, իսկ դո՞ւք: Ամենի՞ն:

— Շատ եմ խղճում,— պատասխանեց նա և անվստահ ծիծաղեց, թեյի սպասքը դնելով սկուտեղին:— Բայց, փառք աստծու, Սոնյան արդեն առողջ է և շուտով այլևս չեք տխրի...

«Իսկ երեկոյան ես կնստեմ ձեզ հետ» խոսքերից սիրտս կուչ եկավ քաղցր ու խորհրդավոր, բայց և անմիջապես մտածեցի, ոչ, ոչ, դա սոսկ սիրալիր խոսք էր: Գնացի իմ սենյակ և երկար պառկել էի հայացքս առաստաղին: Վերջապես վեր կացա, նախասենյակից վերցրի գլխարկս ու ինչ-որ մեկի ձեռնափայտը, և առանց մտածելու, բնազդաբար քայլելով դուրս

եկա կալվածքից լայն ճանապարհ, որ ընկած էր կալվածատան և մի քիչ ավելի վերև, տափաստանային մերկ բլրին գտնվող խոխոլական գյուղի միջև: Ճանապարհը տանում էր դեպի ամայի իրիկնային դաշտեր: Տեղանքը բլրաշատ էր, բայց ընդարձակ, երևում էր հեռուն: Դեպի ձախ գետի ցածրադիր մասն էր, դրանից այն կողմ դեպի հորիզոն էին ձգվում նորից ամայի դաշտեր, այնտեղ հենց նոր մայր էր մտել արևը, հուրհրատում էր արևամուտը: Ինձնից դեպի ձախ այդ լուսավորության դիմաց կարմրին էին տալիս մի շարքի իրար նման սպիտակ խրճիթներն ասես ամայացած գյուղի, ու ես թախծով նայում էի մեկ արևամուտին, մեկ այդ տներին: Երբ վերադառնում էի, դեմիցս փչեց տաք, ապա գրեթե խորշակի նման քամի և երկնքում արդեն փայլում էր միայն մի կեսը, սակայն թափանցիկ ցանցի պես երևում էր և մյուս կեսը, ու երկուսը միասին նման էին խոզակաղինի:

Ընթրիքին,— այս անգամ ընթրիքն էլ այգում էր, տանը շատ շոգ էր,— ասացի ուլանին.

— Քեռի, դուք ի՞նչ եք մտածում եղանակի մասին: Ինձ թվում է՝ վաղը անձրև կլինի:

— Ինչո՞ւ, բարեկամս:

— Հենց նոր գնացել էի դաշտ, ցավով մտածում էի, որ շուտով պիտի հեռանամ ձեզնից...

— Իսկ ինչո՞ւ:

Նատալին նույնպես աչքերն ինձ դարձրեց.

— Դուք պատրաստվում եք մեկնե՞լ:

Կեղծ ծիծաղեցի:

— Հո չեմ կարող ես...

Ուլանը հստակորեն եռանդով տարուբերեց գլուխը, այս անգամ տեղին.

— Հիմարություն, հիմարություն է: Հայրդ և մայրդ շատ լավ կարող են դիմանալ քեզնից հեռու լինելուն: Երկու շաբաթից շուտ քեզ չեմ թողնի գնաս: Ահա, նա էլ չի թողնի:

— Ես որևէ իրավունք չունեմ Վիտալի Պետրովիչի վրա,— ասաց Նատալին:

Ես խղճալի բացականչեցի:

— Քեռի, արգելեք Նատալիին ինձ այդպես կոչել:

Ուլանը ձեռքը զարկեց սեղանին.

— Արգելում եմ: Եվ բավական է քո մեկնելու մասին խոսես: Այ անձրևը ճիշտ ես ասում, շատ հնարավոր է, որ եղանակը նորից վատանա:

— Դաշտում մի տեսակ չափազանց էր մաքուր, պայծառ,— ասացի:— Եվ լուսինն էլ պայծառ էր միայն կիսով չափ ու նման էր խոզակաղինի, քամին էլ հարավից էր: Ահա տեսնում եք, արդեն ամպեր են կուտակվում...

Ուլանը շրջվեց, նայեց այգուն, ուր մեկ մարում, մեկ վառվում էր լուսնի լույսը.

— Վիտալի, դու կդառնաս երկրորդ Բրյուս[1]…

Ժամը տասին նա դուրս եկավ պատշգամբ, ուր ես նստած սպասում էի նրան, տրտմությամբ մտածելով. այս ամենը հիմարություն է, եթե անգամ նա որևէ զգացմունք ունի իմ նկատմամբ, ապա ամենևին ոչ լուրջ, փոփոխական, վաղանցիկ... Նորալուսինը նույնպես մաքուր, առանց ցանցի, ավելի ու ավելի էր բարձրանում ու ավելի պայծառ փայլում մշուշասպիտակ ամպերի գնալով մեծացող կուտակների վրա, որ վեհատեսիլ դիզվել էին երկնքում, և երբ իր սպիտակ կեսով, նման մարդու կիսադեմի, դուրս էր գալիս նրանց տակից, պայծառ ու մռայլ-գունատ, ամեն ինչ լուսավորվում էր, լցվում ֆոսֆորական փայլով: Հանկարծ ետ նայեցի, ինչ-որ բան զգացի. Նատալին կանգնել էր շեմքին, ձեռները մեջքին ծալած, լուռ նայում էր ինձ: Վեր կացա, նա անտարբեր հարցրեց.

— Դեռ չե՞ք քնել:

— Բայց դուք ասացիք...

— Ներեցեք, այսօր շատ եմ հոգնել: Քայլենք մի փոքր ծառուղում, ու ես կգնամ քնելու:

Գնացի նրա ետևից, նա կանգ առավ պատշգամբի սանդուղքին, նայելով այգու կատարներին, որոնց ետևից արդեն քուլա-քուլա բարձրանում էին ամպերը, կտրատվելով, փայլփլելով անձայն կայծակներից: Հետո մտավ կեչու ծառուղու երկար, թափանցիկ ծածկի տակ, լույսի և ստվերի այդ խայտաբղետության մեջ: Նրան հավասարվելով, ասացի, մի բան ասած լինելու համար.

— Ինչ կախարդական են փայլում հեռվում կեչիները: Չկա ավելի զարմանալի, ավելի գեղեցիկ բան, քան անտառի ներսը լուսնյակ գիշերին, կեչիների այս սպիտակ մետաքսափայլը նրա խորքում...

Նա կանգ առավ, կիսամթի մեջ ուղիղ ինձ գամելով աչքերի սև փայլը.

— Դուք իսկապե՞ս մեկնում եք:

— Այո, ժամանակն է:

---

[1] Բրյուս Յակոբ (1670—1735), պետական գործիչ, գիտնական, օրացույցի հեղինակ (ծ.թ.):

— Բայց ինչո՞ւ այդպես հանկարծակի և այդքան շուտ: Չեմ թաքցնում, դուք քիչ առաջ զարմացրիք ինձ ասելով, որ մեկնում եք:

— Նատալի, կարող եմ ես գալ և ներկայանալ ձերոնց, երբ դուք տուն վերադառնաք:

Նա լռեց: Բռնեցի նրա ձեռքերը, համբուրեցի, ամբողջապես նվաղելով, աջ ձեռքը:

— Նատալի...

— Այո, այո, ես սիրում եմ ձեզ,— ասաց նա շտապով և անարտահայտիչ ու քայլեց դեպի տուն: Լուսնոտի նման գնացի նրա ետևից:

— Մեկնեք հենց վաղը,— ասաց նա քայլելով, առանց ետ նայելու։— Ես տուն կվերադառնամ մի քանի օրից:

5

Սենյակս մտնելով, առանց մոմը վառելու նստեցի բազմոցին ու մնացի անշարժ, քարացա սարսափելի, զարմանահրաշ այն բանից, որ այդպես հանկարծակի, անսպասելի կատարվեց իմ կյանքում: Նստել էի, կորցնելով ամեն պատկերացում տեղի ու ժամանակի մասին: Սենյակն ու այգին արդեն սուզվել էին ամպերից առաջացած մթության մեջ, այգում, բաց պատուհաններից դուրս ամեն ինչ աղմկում, դողդողում էր և գնալով ավելի հաճախակի ու ավելի պայծառ ինձ լուսավորում էր արագ բռնկվող ու նույն պահին

անհետացող կանաչա-երկնագույն բոցը: Առանց որոտի այդ լույսի արագությունը և ուժգնությունը շարունակ սաստկանում էր, հետո սենյակը հանկարծ լուսավորվեց անասելի պայծառ, բաց պատուհաններից վրաս խուժեց այնքան զով քամի, այնպիսի մի աղմուկ, ասես սարսափահար էր այգին ահա, կրակվելու է երկինք ու երկիր: Տեղիցս վեր թռա, մեկը մյուսի ետևից փակեցի պատուհանները, մի կերպ շրջանակներից բռնելով, դիմադրելով ինձ զզզող քամուն, և մութ միջանցքներով ոտքերիս ծայրերի վրա վազ տվեցի ճաշասենյակ. թվում է, այդպիսի պահի բոլորովին հոգս չպետք է լիներ բաց են ճաշասենյակի պատուհանները, թե ոչ, որ փոթորիկը կարող էր ջարդել ապակիները, բայց, համենայն դեպս, վազ տվեցի, այն էլ շատ անհանգստացած: Հյուրասենյակի բոլոր պատուհանները փակված էին. դա տեսա այն կանաչաերկնագույն լուսավորության ժամանակ, որի գույնի, պայծառառության մեջ ինչ-որ հիրավի ոչ երկրային մի բան կար, որ միանգամից բացվում էր ամեն կողմի վրա կայծակ աչքերի նման և վիթխարի ու տեսանելի դարձնում ամեն ինչ, մինչև վերջին շրջանակը, ու հետո էլ անմիջապես ամեն ինչ ծածկում թանձր խավարով՝ մի պահ կուրացած տեսողության մեջ թողնելով թիթեղյա, կարմրավուն ինչ-որ հետք: Իսկ երբ ես արագ, ասես վախենալով, թե մի բան պատահած կլինի իմ այնտեղ չեղած ժամանակ, մտա իմ սենյակ, մթության միջից լսեցի զայրացած շշնջոց.

— Որտե՞ղ էիր: Վախենում եմ, շուտ վառիր լույսը...

Լուցկին չխկացրի ու տեսա բազմոցին նստած Սոնյային, միայն գիշերանոցով, մերկ ոտներին մաշիկներ:

— Կամ էլ ոչ, պետք չէ, պետք չէ,— շտապով ասաց նա,— եկ ինձ մոտ, շուտ, գրկիր ինձ, վախենում եմ…

Հնազանդ նստեցի և գրկեցի նրա սառը ուսերը: Նա շշնջաց.

— Դեհ, համբուրիր ինձ, համբուրիր, վերցրու մինչև վերջ, մի ամբողջ շաբաթ քեզ հետ չեմ եղել:

Եվ ուժով նետեց ինձ և իրեն բազմոցի բարձերին: Նույն պահին բացված դռան մեջ երևաց Նատալին իր գիշերազգեստով, մոմը ձեռքին: Նա անմիջապես տեսավ մեզ, բայց, այնուամենայնիվ, ակամա բղավեց.

— Սոնյա, ո՞ւր ես: Ես սարսափելի վախենում եմ...

Ու անմիջապես անհետացավ: Սոնյան վազեց նրա ետևից:

6

Մի տարի հետո նա ամուսնացավ Մեշչերսկու հետ: Պսակվեցին նրանք Բլագոդատնիում, դատարկ եկեղեցում. ոչ մենք, ոչ էլ երկուսի կողմից մյուս ազգականներն ու ծանոթները հարսանիքի հրավեր չէին ստացել: Եվ ամուսնությունից հետո ընդունված այլ այցերն էլ նորապսակները չկատարեցին, անմիջապես մեկնեցին Ղրիմ:

Հաջորդ տարի հունվարին վորոնեժցի ուսանողների ցուցահանդեսն էր Վորոնեժի Ընտիր հավաքում: Ես, արդեն մոսկովյան ուսանող, ջրօրհնեքը տանն էի անցկացնում, գյուղում, և այդ երեկո գնացի Վորոնեժ: Գնացքը եկավ ամբողջապես սպիտակ, փոթորիկից ձնակոլոլ, կայարանից մինչև քաղաք ճանապարհին մինչ սահնակակառքն ինձ Դիվորյանսկայա հյուրանոց կհասցներ, փոթորիկի միջից հազիվ էին երևում լապտերների լույսերը: Սակայն գյուղից հետո այդ քաղաքային փոթորիկը և քաղաքային լույսերը հուզում էին, խոստանում մոտալուտ հաճույք մտնելու տաք, նույնիսկ չափազանց տաք համարը նահանգային հին հյուրանոցի, խնդրելու ինքնաեռ և, զգեստափոխվելու՝ պատրաստվելու երկար պարահանդեսային գիշերվա, ուսանողական գինարբուքի մինչ լուսաբաց: Չերկասովների տանը այն սարսափելի գիշերվանից, ապա նրա ամուսնությունից հետո անցած այդ ժամանակաընթացքում ես կամաց-կամաց կարգի ընկա, համենայն դեպս վարժվեցի հոգեկան հիվանդ մարդու այն վիճակին, ինչ վիճակի մեջ որ էի ինքս իմ մեջ, արտաքուստ շարունակելով ապրել, ինչպես բոլորը:

Երբ գնացի, պարահանդեսը դեռ նոր էր սկսվել, սակայն շքասանդուղքը և սանդուղքի վերևի հարթակը արդեն լիքն էր շարունակ ժամանող մարդկանցով, իսկ գլխավոր սրահից դղրդում, ամեն ինչ խլացնում էր գնդի նվագախումբը, վալսի թախծալի հաղթական երաժշտություն թնդացնելով: Ցրտից թարմացած, նոր համազգեստով, ու այդ պատճառով չափազանց էլեգանտ, չափազանց քաղաքավարությամբ շարժվելով մարդկանց միջից սանդուղքի կարմիր գորգի վրայով, բարձրացա հարթակ և մտա հատկապես խիտ և արդեն տաք բազմության մեջ, որ խմբվել էր սրահի դռան առաջ, ու չգիտես ինչու շարունակեցի առաջ անցնել այնքան համառորեն, որ ինձ հավանաբար սրահում անհետաձգելի գործ ունեցող կարգադրիչի տեղ դրեցին: Վերջապես ներս խցկվեցի, կանգ առա շեմքին, նվագախմբի հենց գլխիս ճայթող թնդյունների տակ, նայելով ջահի փայլփլող ծփանքին և դրա տակ վալս պտտվող մի քանի տասնյակ պես-պես զույգերին, և հանկարծ մնացի սառած, այդ պտտվող բազմության միջից ինձ համար հանկարծ առանձնացավ մի զույգ, որ արագ և ճկուն պտույտներով մյուսներից առաջ թռչում էր դեպի ինձ: Թափով ետ քաշվեցի, տեսնելով ինչպես տղամարդը վալսելուց մի քիչ կռացած, հաղթանդամ, հաստ, ամբողջապես սև՝ սև փայլուն մազերով և ֆրակով, թեթև, այն թեթևությամբ, որ միշտ զարմացնում է որոշ ծանրամարմին մարդկանց պարի մեջ, և կինը՝ սլացիկ, պարահանդեսային բարձր սանրվածքով, պարահանդեսային սպիտակ զգեստով և գեղեցիկ ոսկեգույն կոշիկներով. կինը պտտվում էր մի քիչ գլուխը ետ գցած, աչքերը ցած, սպիտակ ձեռնոցով ձեռքը տղամարդու ուսին այնքան գեղեցիկ դրած, որ նմանվում էր կարասի պարանոցի: Մի պահ նրա սև թարթիչները բացվեցին ուղիղ վրաս, աչքերի սևը փայլեց շատ մոտ, բայց նույն պահին տղամարդը հաստամարմին մարդու ջանադրությամբ, ճարպկորեն սահելով լաքե կոշիկներով, կտրուկ շրջեց նրան, նրա շուրթերը հառաչանքով կիսաբացվեցին շրջվելիս, արծաթափայլին տվեց զգեստի փեշը, ու նրանք, շարունակելով պտտվել, հեռացան: Նորից խցկվեցի հարթակի բազմության մեջ, դուրս եկա մարդկանց միջից, կանգնեցի... Դիմացի սրահի դռանը, որ դեռ բոլորովին դատարկ էր ու ցուրտ, շամպայնի բուֆետի մոտ պարապ կանգնած էին երկու ուսանողուհի մալոռուսական հագուստներով՝ սիրունիկ մի շիկահեր և չոր-չոր, թխադեմ գեղեցիկ կազակուհի, որ գրեթե կրկնակի բարձրահասակ էր շիկահերից: Ներս մտա, գլխի խոնարհումով նրանց մեկնեցի հարյուր ռուբլիանոցը: Նրանք, գլուխներն

իրար զարկելով ու ծիծաղելով, սեղանի տակից սառույցով դույլից հանեցին ծանր շիշն ու մի տեսակ անվճռական իրար նայեցին. բացած շշեր դեռ չկային: Անցա սեղանի ետև ու մի բոպեից խցանը կրակոցով բացեցի: Հետո ուրախ մի-մի շամպայն առաջարկեցի նրանց — Gaudeamus igitur[2],— մնացածը գավաթ առ գավաթ խմեցի ինքս: Նրանք նայում էին ինձ նախ զարմանքով, հետո խղճահարությամբ:

— Օ, դուք առանց այդ էլ սարսափելի գունատ եք:

[2] Եկեք զվարճանանք (*լատ.*):

Շամպայնը խմեցի վերջացրի և անմիջապես մեկնեցի: Հյուրանոցում խնդրեցի համարս բերել մի շիշ կովկասյան կոնյակ ու սկսեցի խմել թեյի գավաթով, հույսով, որ սիրտս կպայթի...

Անցավ ևս մեկ ու կես տարի: Մի անգամ մայիսի վերջերին, երբ նորից Մոսկվայից տուն էի եկել, սուրհանդակը կայարանից բերեց նրա հեռագիրը Բլագոդատնիից. «Այսօր առավոտյան Ալեքսեյ Նիկոլաևիչը հանկարծամահ եղավ կաթվածից»: Հայրս երեսը խաչականքեց և ասաց.

— Աստված հոգին լուսավորի: Ի՜նչ սարսափելի բան է: Ներիր ինձ, տեր, երբեք չեմ սիրել նրան, բայց, միևնույն է, սարսափելի է: Չէ որ դեռ քառասուն էլ չկար: Եվ կինն էլ է սարսափելի մեղք. այրի դառնաս այդ տարիքում, երեխան հետդ... Կնոջը երբեք չեմ տեսել,— նա այնքան սիրալիր էր, որ ոչ մի անգամ կնոջը մեզ մոտ չբերեց,— բայց, ասում են, շատ գեղեցիկն է: Հիմա ի՞նչ անենք: Ոչ ես, ոչ մայրդ մեր այս տարիքում հարյուր հիսուն վերստ ճամփա կտրել չենք կարող, դու պետք է գնաս...

Մերժել չէի կարող. ի՞նչ պատճառով պիտի մերժեի: Եվ մտքովս էլ չէի անցկացնի մերժել այն կիսախելահեղ վիճակում, որի մեջ ընկա այդ անսպասելի լուրից: Մի բան գիտեի. նրան կտեսնեմ: Հանդիպման առիթը սարսափելի էր, բայց օրինական:

Պատասխան հեռագիր ուղարկեցինք, և հաջորդ օրը, մայիսյան իրիկնային վերջալույսին, Բլագոդատնիից ուղարկված ձիերն ինձ կես ժամում կայարանից հասցրին դաստակերտ, ուսանողական տարածված հիմնի առաջին տողը:

Ողողովի մարգագետինների երկայնքով ընկած բարձունքով մոտենալով դաստակերտին, հեռվից տեսա, արևմտյան պատին՝ դեռ լուսավոր մայրամուտից, սրահի բոլոր պատուհանները փակված են փակոցափեղկերով, ու սարսափեցի զարհուրելի մտքից. դրանց ետև պառկած էր նա և այնտեղ էր կինը: Մատղաշ խոտով խիտ ծածկված բակում, կառքատեղի մոտ բոժոժներն էին զնգզնգացնում ինչ-որ մարդկանց երկու եռաձի կառքեր, բայց ոչ ոք չկար, բացի նստիքներին բազմած կառապաններից, և՛ եկածները, և՛ տնեցիներն արդեն կանգնած էին տանը հոգեհանգստին: Ամենուրեք լռություն էր գյուղական մայիսյան վերջալույսի, գարնանային մաքրություն, թարմություն և նորություն ամեն ինչի՝ դաշտային և գետի օդի, բակի այս մատղաշ խիտ խոտի, ծաղկող խիտ այգու, որ մոտենում էր տանը ետևից և հարավային կողմից, իսկ ցածր շքամուտքի մոտ, դեպի նախասենյակ կրնկի վրա բաց դռան կողքին կանգնած դիրքով պատին էր հենած դագաղի մեծ, դեղին ոսկեթել նախշով պատած կափարիչը: Իրիկնային օդի նուրբ զովի մեջ զգացվում էր տանձենիների ծաղիկների քաղցրաբույրը, որ իրենց խիտ սպիտակով կաթնա-սպիտակին էին տալիս այգու հարավ-արևելյան մասին հարթ և այդ կաթնա-սպիտակից փայլատ երկնակամարում, ուր վառվում էր մեն-մենակ վարդագույն Յուպիտերը: Եվ ջահելությունն ու գեղեցկությունն այդ ամենի, և միտքը նրա ջահելության ու գեղեցկության մասին, այն մասին, որ նա մի ժամանակ սիրում էր ինձ, հանկարծ սիրտս այնպես կտրատեցին վշտից, երջանկությունից, սիրո փափագից, որ առմուտքի մոտ դուրս թռչելով կառքից, այնպիսի զգացում ունեի, կարծես անդունդի եզրին լինեմ. ինչպես մտնեմ այդ տուն, նորից տեսնեմ նրան դեմ-հանդիման երեք տարվա բաժանումից հետո, տեսնեմ նրան արդեն այրիացած և

մայր դարձած։ Եվ սակայն ներս մտա մոմերի դեղին լույսերով ծածկված այդ սարսափելի սրահի կիսամթի և խնկաբույրի մեջ, այդ մոմերը ձեռքներին կանգնածների սևի մեջ՝ թեք ու գլխամասով մի քիչ բարձր դրված դագաղի մոտ, որ վերևից լուսավորված էր ոսկե սրբապատկերների առջևի մեծ կարմիր կանթեղով, իսկ ներքևից եկեղեցական երեք բարձր մոմերի արծաթափայլով. մտա հոգևորականների

բացականչությունների և երգեցողության մեջ, որ գլուխ խոնարհելով անցնում էին դագաղի կողքից, և անմիջապես գլուխս կախ զցեցի, որ չտեսնեմ դագաղի վրայի դեղին դիպակն ու հանգուցյալի դեմքը, իսկ ամենից ավելի վախենում էի տեսնել նրան։ Ինչ-որ մեկը ձեռքս տվեց վառված մոմ, վերցրի ու պահեցի, զգալով ինչպես այն դողդողալով տաքացնում ու լուսավորում է գունատված դեմքս, ու բութ հնազանդությամբ լսում էի այդ բացականչություններն ու բուրվառի զրնգոցը, աչքիս պոչով տեսնելով դեպի առաստաղ բարձրացող հանդիսավոր ու քաղցրահամ բուրող ծուխը, ու հանկարծ դեմքս բարձրացնելով համենայն դեպս տեսա նրան. բոլորից առաջ, սքազգեստ, մոմը ձեռքին, որ լուսավորում էր նրա այտը և մազերի ոսկեգույնը, և արդեն, ինչպես սրբապատկերից, չէի կարողանում հայացքս նրանից հեռացնել։ Երբ ամեն ինչ լռեց, հանգցրած մոմերի հոտ տարածվեց, ես սպասում էի, որ վերջինը մոտենամ։ Եվ մոտենալով, հրճվանքի սարսափով նայեցի միանձնուհու խստությանը նրա սև զգեստի, որ նրան հատկապես անարատ էր դարձնում, մաքուր, ջահել գեղեցկությանը նրա դեմքի, աչքերի, թերթերունքների, որ ինձ տեսնելիս ցած էր զցել, ցած, շատ ցած խոնարհվեցի, համբուրելով նրա ձեռքը և ասացի հազիվ լսելի ձայնով այն ամենը, ինչ պետք է ասեի ազգականի պարտավորությամբ, ապա թույլտվություն խնդրեցի անմիջապես հեռանալ գիշերելու այգում, այն հինավուրց ռոտոնդայում, որտեղ գիշերում էի դեռ գիմնազիստ եղած ժամանակս Բլագոդատնոյե գալիս. այնտեղ էր Մեշչերսկու ննջասենյակը ամառային շոգ գիշերներին։ Նա պատասխանեց առանց աչքերը բարձրացնելու.

— Հիմա կկարգադրեմ, որ ձեզ ուղեկցեն այնտեղ և ընթրիք բերեն ձեզ համար։

Առավոտյան, հուղարկավորման ծեսից և թաղումից հետո, անմիջապես մեկնեցի։

Հրաժեշտ տալիս մենք դարձյալ մի քանի խոսք փոխանակեցինք և դարձյալ առանց իրար նայելու։

7

Ուսումս ավարտեցի, դրանից շատ չանցած գրթե միաժամանակ կորցրի հորս և մորս, բնակություն հաստատեցի գյուղում, տնտեսությամբ էի զբաղվում, կապվեցի որբ գեղջկուհի Գաշայի հետ, որ մեր տանն էր մեծացել, ծառայում էր մորս… Հիմա նա, մեր նախկին ճորտ սպասավոր Իվան Լուկիչի, մեծ-մեծ թիակներով ամբողջապես ճերմակած ծերուկի հետ ծառայում էր ինձ։ Նա դեռ կիսամանկական տեսք ուներ՝ փոքրամարմին, նիհար, սև մազերով, մրի գույնի ոչինչ չարտահայտող աչքերով, խորհրդավոր լռակյաց,

ասես ամեն ինչի հանդեպ անտարբեր, և այնքան նուրբ թուխ մաշկով, որ հայրս մի ժամանակ ասում էր. «Ահա, երևի, սրա նման է եղել Հազարը»[3]: Նա ինձ համար անասելի սիրելի էր, սիրում էի ձեռքերիս վրա պահել, համբուրելով մտածում էի. «Ահա և այն ամենը, ինչ մնաց ինձ կյանքում»: Եվ նա կարծես հասկանում էր, թե ինչ էի մտածում: Երբ երեխա բերեց,— փոքրիկ, սևամազ մի տղա,— և դադարեց ծառայել, սկսեց ապրել իմ նախկին մանկասենյակում, ուզում էի ամուսնանալ հետը: Նա պատասխանեց.

— Ոչ, դա ինձ պետք չէ, ես միայն պիտի ամաչեմ բոլորի մոտ, ինձնից ինչ տիրուհի: Եվ ձե՞ր ինչին է պետք: Այն ժամանակ դուք ինձ ավելի շուտ կդադարեք սիրել: Դուք պետք է Մոսկվա գնաք, թե չէ բոլորովին կձանձրանաք ինձ հետ: Իսկ ես հիմա չեմ ձանձրանա,— ասաց նա նայելով երեխային, որ նրա գրկում կուրծք էր ուտում:— Գնացեք, ապրեք ձեր քեֆին, միայն մի բան հիշեք. եթե մեկնումեկին իսկական սիրահարվեք ու ուզեք ամուսնանալ, ոչ մի բոպե չեմ մտածի, ինձ ջուրը կգցեմ սրա հետ:

Նայեցի նրան, չհավատալ նրան չէր լինի: Ու կախ գցեցի գլուխս վհատված, ահա, իսկ չէ որ ես դեռ ընդամենը քսանվեց տարեկան եմ: Սիրահարվել, ամուսնանալ՝ դա պատկերացնել իսկ չէի կարող, սակայն Գաշայի խոսքերը ինձ մեկ անգամ ևս հիշեցրին փշրված կյանքս:

Վաղ գարնանը մեկնեցի արտասահման, մի չորս ամիս մնացի այնտեղ: Հունիսի վերջին Մոսկվայով տուն վերադառնալիս այսպես էի մտածում. աշնանը կապրեմ գյուղում, իսկ ձմռանը նորից մի տեղ կմեկնեմ: Մոսկվայից մինչև Տուլա ճանապարհին հանգիստ թախծում էի.— ահա, նորից տանն եմ, բայց ինչո՞ւ: Հիշեցի Նատալիին ու մտածեցի, այո, այն «ցմահ սերը», որ հեգնանքով գուշակում էր ինձ Սոնյան, գոություն ունի, միայն թե ես արդեն ընտելացել եմ դրան, ինչպես մարդը տարիների ընթացքում ընտելանում է, որ կտրել են իր, ասենք, ձեռքը, ոտքը... Եվ Տուլայի կայարանում նստած սպասելով գնացքը փոխելուն, հանկարծ հեռագրեցի. «Մոսկվայից վերադառնում եմ ձեր կողմերով, ձեր կայարանում կլինեմ երեկոյան իննին, թույլ տվեք այցելել ձեզ, իմանալու ինչպես եք»:

Նա դիմավորեց ինձ առմուտքին,— ետևից լամպով լուսավորում էր սպասուհին,— և կիսաժպիտով ինձ մեկնեց երկու ձեռքերը.

— Սարսափելի ուրախ եմ:

— Որքան էլ տարօրինակ է, դուք մի քիչ էլ եք հասակ առել,— ասացի, համբուրելով նրա ձեռքերն ու զգալով դրանք արդեն տառապանքով: Ու նայեցի նրան ոտքից գլուխ լամպի լույսի տակ, որ սպասուհին բարձրացրել էր և որի ապակու շուրջ, անձրևից հետո մեղմ օդում, պտտվում էին փոքրիկ վարդագույն թիթեռներ. սև աչքերը հիմա նայում էին ավելի պինդ, վստահ, նա ամբողջապես փթթում էր ջահել կանացի գեղեցկությամբ. բարեկազմ, համեստ ու շքեղ, կանաչ չեսուչայե զգեստով:

— Այո, ես դեռ շարունակում եմ մեծանալ,— պատասխանեց նա տխուր ժպտալով:

---

[3] Ըստ Աստվածաշնչի ավանդության՝ հայր Աբրահամի հարճը (ծ.թ.):

Սրահի դեմի անկյունում հին ոսկեզօծ սրբապատկերների առջև դեռ կախված էր մեծ կարմիր կանթեղը, միայն չվառված: Շտապեցի աչքս փախցնել այդ անկյունից ու նրա հետ մտա ճաշասենյակ: Այնտեղ մաքրությունից փայլող սփռոցի վրա դրված էր թեյամանը սպիրտայրոցով, փայլփլում էր նուրբ թեյասպասքը: Սպասուհին բերեց սառը հորթի միս, թթու վարունգ, փոքրիկ ջրամանով օղի, մի շիշ լաֆիտ: Նա ձեռքը տարավ թեյամանին.

— Ես չեմ ընթրում, միայն թեյ կխմեմ, իսկ դուք նախ կերեք... Մոսկվայի՞ց եք գալիս: Ինչո՞ւ: Ամառն այնտեղ ի՞նչ էիք անում:

— Վերադարձել եմ Փարիզից:

— Ահա թե ինչ: Եվ երկա՞ր էիք այնտեղ: Ախ, եթե ես կարողանայի որևէ տեղ գնալ: Բայց աղջիկս դեռ չորս տարեկան է... Դուք, ասում են, եռանդով զբաղված եք տնտեսությա՞մբ:

Խմեցի մի ըմպանակ օղի, առանց ուտելու, և թույլտվություն խնդրեցի ծխելու:

— Օհ, խնդրեմ:

Ծխեցի և ասացի.

— Նատալի, պետք չէ ինձ հետ լինել քաղաքավարի սիրալիր, ինձ վրա առանձնապես ուշադրություն մի դարձրեք, ես եկա ուղղակի մի անգամ ձեզ տեսնեմ ու նորից կչքվեմ: Ու ձեզ անհարմար մի զգացեք, չէ որ այն, ինչ եղել է, վաղուց արդեն անցել է անդառնալիորեն: Դուք չեք կարող չտեսնել, որ ես դարձյալ շլացած եմ ձեզնով, բայց հիմա ձեզ ամենևին չի կարող նեղություն պատճառել իմ հիացմունքը, հիմա այն անշահախնդիր է և խաղաղ...

Նա կախ գցեց գլուխը և թերթերունքները՝ և մեկի և մյուսի զարմանահրաշ հակադրությանը երբեք հնարավոր չէր վարժվել, ու դեմքն սկսեց դանդաղ վարդագունել:

— Դա միանգամայն ճշմարիտ է,— ասացի գունատվելով, սակայն հաստատուն դարձող ձայնով, ինքս ինձ համոզելով, որ ճշմարիտ եմ ասում:— Չէ որ աշխարհում ամեն ինչ անցնում է: Իսկ ինչ վերաբերում է ձեր հանդեպ իմ սարսափելի մեղքին, ապա վստահ եմ, որ այն շատ վաղուց արդեն որևէ նշանակություն չունի ձեզ համար և հիմա շատ ավելի հասկանալի է և ներելի, քան առաջ, իմ մեղքը այնուամենայնիվ այնքան էլ իմ կամքով չէր և նույնիսկ այն ժամանակ արժանի էր ներողամտության իմ չափազանց ջահելության պատճառով, և հանգամանքների այն զարմանալի բերումի, որի մեջ ես ընկա: Եվ հետո, արդեն բավականաչափ պատժված եմ այդ մեղքիս համար իմ կործանումով:

— Կործանումո՞վ:

— Իսկ մի՞թե՝ ոչ: Դուք մինչև օրս էլ չե՞ք հասկանում, չե՞ք ճանաչում ինձ, ինչպես ասացիք մի ժամանակ:

Նա լռում էր:

— Ես տեսա ձեզ Վորոնեժի պարահանդեսում... Ինչքան ջահել էի դեռ այն ժամանակ և ինչքան դժբախտ: Թեև մի՞թե սերը կարող է դժբախտ լինել,— ասաց նա, դեմքը դարձնելով

ինձ ու հարցնելով աչքերի ու թարթիչների սև-սևով։— Աշխարհի ամենաթախծալի երաժշտությունն անգամ երջանկություն չի՞ տալիս արդյոք: Բայց պատմեք ինձ ձեր մասին, մի՞թե ընդմիշտ բնակություն եք հաստատել գյուղում:

Հարցրի նրան մեծ ջանքով:

— Ուրեմն, դուք դեռ այն ժամանակ սիրո՞ւմ էիք ինձ:

— Այո:

Լռեցի, զգալով, որ դեմքս հիմա կրակի պես վառվում է:

— Ճի՞շտ է այն, ինչ ես լսել եմ... որ դուք ունեք սեր,երեխա:

— Դա սեր չէ,— ասացի։— Սարսափելի խղճահարություն, քնքշություն, ուրիշ ոչինչ:

— Պատմեք ինձ ամեն ինչ:

Ու ես պատմեցի բոլորը՝ ընդհուպ մինչև այն, ինչ ասել էր ինձ Գաշան, խորհուրդ տալով «գնալ, ապրել իմ քեֆին»: Եվ վերջացրի այսպես.

— Հիմա տեսնո՞ւմ եք, որ լրիվ կործանված եմ...

— Բավական է,— ասաց նա, իր միտքը մտածելով։— Դեռ ամբողջ կյանքը ձեր առջևում է: Սակայն ամուսնությունը ձեզ համար, իհարկե, անհնարին է: Նա, անշուշտ, այն կանանցից է, որ երեխային էլ չի խնայի, ուր մնաց իրեն։

— Բանը ամուսնությունը չէ,— ասացի։— Տեր աստված: Ես ամուսնանա՜մ:

Նա մտազբաղ նայեց ինձ.

— Այո, այո: Եվ որքան տարօրինակ է: Ձեր նախագուշակությունը կատարվեց, մենք բարեկամացանք: Դուք զգում եք, չէ՞ որ դուք հիմա իմ զարմիկն եք:

Եվ ձեռքը դրեց իմ ձեռքին.

— Բայց դուք սարսափելի հոգնել եք ճանապարհից, ուտելիքին նույնիսկ ձեռք չտվեցինք: Դեմքներիդ գույն չկա,

բավական է այսօր խոսենք, գնացեք, ձեզ համար անկողին է պատրաստված տաղավարում...

Խոնարհ համբուրեցի նրա ձեռքը, նա կանչեց սպասուհուն, և սա լամպը պահած, թեև բավական լույս էր այգու հետև կախված լուսնից, ինձ նախ գլխավոր, հետո կողմնային ծառուղիով տարավ ընդարձակ բացատ, փայտե սյուներով այն հին ռոտոնդան: Եվ ես նստեցի բաց պատուհանի մոտ անկողնու կողքին դրված բազկաթոռին, սկսեցի ծխել մտածելով. բոլորովին զուր էր իմ այս հիմար, անսպասելի արարքը, զուր եկա հույս ունենալով իմ հանգստությանը, իմ ուժերին... Գիշերն աներևակայելի խաղաղ էր, արդեն

ուշ էր: Հավանաբար մի փոքր էլ անձրևել էր, օդն ավելի էր տաքացել, մեղմացել: Եվ այդ անշարժ տաքությանն ու լռությանը ներդաշնակ գյուղի այս ու այն տեղերում զգույշ ու երգեցիկ կանչում էին առաջին աքաղաղները: Ռոտոնդայի դիմաց, այգու հետև կանգնած լուսնի պայծառ գունդը ասես անշարժացել էր նույն տեղում, ասես սպասողական նայում, փայլփլում էր հեռավոր ծառերի և մոտիկ ճյուղատարած խնձորենիների մեջ, իր լույսը խառնելով նրանց ստվերներին: Այնտեղ, ուր լույսը թափանցում էր, պայծառ էր, ապակեփայլ, իսկ ստվերի մեջ լույս ու մութ էր ու խորհրդավոր... Եվ նա երկար, մուգ, մետաքսե փայլփլուն ինչ-որ բանով մոտեցավ պատուհանին, նույնպես այնքան խորհրդավոր, անձայն...

Հետո լուսինն արդեն փայլում էր այգու գլխին և նայում ուղիղ ռոտոնդային, իսկ մենք խոսում էինք հերթով, նա՝ անկողնում պառկած, իսկ ես նրա առջև չոքած ու ձեռքը բռնած.

— Կայծակների այն զարհուրելի գիշերը ես արդեն սիրում էի քեզ, ու միայն քեզ, ուրիշ ոչ մի զգացմունք, քո նկատմամբ հիացմունքի ու մաքուր սիրուց բացի, չունեի արդեն:

— Այո, ժամանակի ընթացքում ես ամեն ինչ հասկացա: Բայց և այնպես երբ հանկարծ հիշում էի այդ կայծակները, անմիջապես այն բանից հետո, ինչ մի ժամ առաջ եղել էր ծառուղում...

— Քեզ նմանը չկա աշխարհում: Երբ քիչ առաջ նայում էի այդ կանաչ չեսուչային և քո ծնկներին դրա տակ, զգում էի, որ պատրաստ եմ մեռնել շրթունքներս միայն մի անգամ դրանց հպելու համար:

— Դու երբեք, երբեք չե՞ս մոռացել ինձ այս տարիներին:

— Մոռացել եմ միայն այնպես, ինչպես մոռանում ես, որ ապրում ես, շնչում: Եվ դու էլ ճիշտ ասացիր. դժբախտ սեր չկա: Ախ, այն քո նարնջագույն գիշերազգեստը, և դու ամբողջովին, դեռ գրեթե փոքրիկ աղջնակ, որ մի պահ երևացիր ինձ այն առավոտ, քո հանդեպ իմ սիրո առաջին առավոտ: Հետո քո ձեռքը մալոռուսական բլուզի թևքի մեջ: Հետո գլխիդ թեքվածքը, երբ կարդում էիր «Զառիթափը», ու ես շշնջում էի. «Նատալի, Նատալի»:

— Այո, այո:

— Իսկ հետո դու պարահանդեսում, այնքան բարձրահասակ, այնքան սարսափելի քո արդեն կանացի գեղեցկությամբ, ինչպես էի ուզում ես մեռնել այդ գիշեր խանդավառությունից իմ սիրո և կործանման: Հետո դու մոմը ձեռքիդ, քո սուգը և քո անարատությունը այդ սգի մեջ: Ինձ թվում էր, որ սուրբ էր դարձել քո դեմքի մոտի այն մոմը:

— Եվ ահա դու դարձյալ ինձ հետ ես և արդեն առհավետ: Սակայն նույնիսկ մեր հանդիպումները պետք է լինեն հազվադեպ. ինչպե՞ս կարող եմ ես, քո գաղտնի կինը, դառնալ, քո բացահայտ սիրուհին բոլորի համար:

Դեկտեմբերին նա մահացավ Ժնևի լճում վաղաժամ ծննդաբերությունից:

4 ապրիլի 1941